

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՆՈՐԱՆՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԾՈՎԿԻՆ, ՎԱՆԱՏՈՒՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՅՐՈՒՆԱԾՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՑ, ԵՐՈՒՍԱԳԷՄ, 1998, 415 էջ

Լրացավ Երուսաղեմի և Հակոբյանց վանքի միաբան Նորայր արքեպիսկոպոս Մովսեսի (Պողոսյան) ծննդյան 80-ամյակը։ Հայ բանասիրության երախտավորը հեղինակ է բազմաթիվ ուսումնասիրությունների, այդ թվում՝ սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրերի տասնհինգամյա տոհմը «Մայր ցուցակի», որ հրատարակվել է 1988—1991 թթ.։ Գիտնականի հոբելյանի նախօրեին լույս տեսավ նրա բանասիրական հոդվածների հավաքածուն՝ «Վանատուրք», որի նյութերից շատերը ժամանակին տպագրվել են պարբերական մամուլում և այսօր, ինչպես ինքն է գրում՝ «դիւրամատչելի չէին հայ բանասերներուն»։ Այստեղ քննարկվում են Ծ-ԺԷ դարերի մատենագրության մեծ ու փոքր դեմքերի, երևույթների հետ աղբյուրող ամենաբազմազան խնդիրներ։

Ե դարի մշակութային կյանքը ներկայացնող հոդվածները շրջափում են թարգմանական գրականությունը, տարբեր պատմիչների երկերի մեջ հանդիպող ընդհանուր տեղիները, սրբագրություններ նրանց երկերում, ժամանակագրական ճշգրտումներ։ «Լուրիների ժամանակագրական վերջաբանը» հոդվածով արժանանում է հույժ կարևոր հարցեր՝ երբ է կրոնավորվել Մեսրոպ Մաշտոցը, և երբ է հիմնադրվել հայ դպրությունը։ Հիմնավորելով իր այն դրույթը, թե Հազկերտի որդի Վռամի թագավորության տարիները դուրս են մնացել ինքուրիքի քննադրից, ուստի նրա խոսքի մեջ զոյացել է անհամաձայնություն, Ն. Մովսեսյանը առաջարկում է «վարք Մաշտոց»ի մեջ կատարել բնագրային ճշգրտում։ «Էր արդ ինքի համար հուսատոց երանելոյն ամբ քառասուն եւ հինգ, եւ ի դպրութենէն Հայոց մինչեւ ցախիսուն Աշոցն ամբ երեսուն եւ հինգ, որք համարեն այսպէս. թագաւորեալ կոմանայ պարսից արքայի ամս վեց, եւ Յազկերտի ամս քսան եւ մի, եւ Վռամայ ամս քսան եւ մի, եւ յաւաքումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ վախճանեցաւ երանելին»։ Մատենագրի խոսքի մեջ ծագած հավաստությունը արթագրելով, հավելելով ընդգծված բառերը, հետազոտողը ստուգապես հայտնի փաստերի համադրությամբ եզրակացնում է, թե 404-ը ճշգրիտ թվականն է հայ գրերի

գլուխ։

Ս. Հակոբյանց վանքի ճառընտիրներից մեկում Նորայր արքեպիսկոպոսը գտել է մի ընդարձակ հատված, որ հնարավորություն է տալիս վերականգնելու Փարպեցու Պատմության քննադրի ակնհայտորեն աղճատված տեղիները, երբեմն հաստատելու հրատարակիչների ինչ-ինչ կոսհուսմանը ու ենթադրություններ, մերժելու ուրիշները։ 1904-ի քննական հրատարակության մեջ, օրինակ՝ կարդում ենք. «...եղեպ կատարելապէս հմուտ եղողական տառիցն»։ Բանասերները նկատել են, որ սխալ ընթերցված է՝ երգողական տառիցն, և Հ. Կ. Տեր-Սահակյանը առաջարկել է վերջին րոնգծված բառը սրբագրել՝ տառիցն։ Մերժելով այս առաջարկությունը՝ Հ. Գ. Նահապետյանը ենթադրել է, որ Ղազար Փարպեցին երգողական տառ ասելով նկատի ունի քերթողական արվեստը։ Ենթադրությունը տալիս է ճիշտ ընթերցումը, և ուսումնասիրողն իրավամբ նշկատում է, թե Պատմության՝ Բաղեղեմի ձեռագիրն ունի «հմուտը երգողական», ուր ընդգծված Գիմը սովորական գրչական աղավաղումով փոխարինել է Դ-ին, իսկ Բ-ն միացել է նախորդ բառին։ Կասկածից վեր է, որ նորահայտ քննադիրը պահպանել է ճիշտ ընթերցումը՝ հմուտ քերթողական տառիցն։

Զ դարի հայ գրականության կարևոր դեմք է Պետրոս Սյունյաց եպիսկոպոսը, որի ժառանգության վերաբերյալ մեր ծանոթությունները ցավալիորեն աղքատ ու աղճատ են։ Ն. Մովսեսյանը, անա, հրապարակել է «Պետրոսի Սյունյաց եպիսկոպոսի առ Սուրբ Յիզիսիբուզիտ յորժամ ի քանդի էր ի Դ-իմին» գողտրիկ բնագիրը, մյուս կողմից նկատելով, որ Հանգստեան և Մարտիրոսաց շառականները շփոթությամբ են վերագրել Պետրոս Գետաղարթին, հայկանական է համարում, որ դրանց հեղինակը նույնպես Սյունյաց եպիսկոպոսն է։

Արժե անդրադառնալ ևս մի հրապարակման։ Մխթար Ալիշվանցին հաղորդում է՝ որ Սահակոյախ Սյունյացի հորինել է քազում տաղեր, մեղեդիներ, «կցուղոս ձընդեղան եւ փոխմանն»։ Ն. Մովսեսյանը 1951-ին գտավ և «Հալս» հանդեսում հրատարակեց Սահակոյախի ձնդեղան կցուղոց, որ քա-

177

նաստեղծուհու՝ մեզ հայտնի միակ գործն է մինչև օրս: Եվ այժմ՝ Երուսաղեմի թթ. 2431 և 1741 ձեռագրերից քաղելով, մա շրջանառության մեջ է դնում «Կլուրդ փոխման (կատարածածնի» (սկ. «էկյսալր քազմութիւնը առաքելոց») քննադիրը:

1). Հակոբյանց վանքի գետնահարկից հանված մի գրեթե աննշան քարաքելորի (մարմար) վրա պահպանվել են վանքի, ջուղայնի, բաղիշեցի ուխտավորների անուններ: Ն. Մովսիսյանը հրատարակելով մեծապես վնասված այդ արձանագրության վերծանությունը՝ պարզում է, որ հիշատակվող մեծահարուստները 1811 թ. են եղել Երուսաղեմում՝ ս. Հակոբյանց վանքի պարտքերը մարելու նպատակով: Այդ առիթով հեղինակը բերում է տեղեկություններ Սարգիս գրչի հիշատակարանից, Սիմեոն Դպիր Լեհացու «Ուղեգրությունից»: Իրար լրացնող ու հաստատող փաստերի դիտարկմամբ բանասերը ապացուցում է դրանց վստահելիությունը և եզրակացնում, որ մարմարե հուշարձանը կանգնեցվել է շուրջ 1811-ին, ս. Տավրեանց վանքին պարտքեր է ազատումը իրագործող պատուական բարերարներու յիշատակին»:

Կարևոր ճշգրտումներ կան Շարակյանների հեղինակների կապակցությամբ: Եթե Պետրոս

Դետագարձին վերագրված Հանգստեան ն Մարտիրոսաց շարակյանները հետազոտողն ընծայում է Պետրոս Սյունյաց եպիսկոպոսին, ապա Համօրեն ցնթեցիկոց կանոնի 17 պատկերները վերագրում է «լետնագոյն գրողներու»:

Ընթերցողը բանասիրական ու պատմագիտական արժեքավոր դիտողություններ կը գտնի Մովսես Խորենացուն, Հովհան Մալքան վանեցուն, Ստեփանոս Սյունեցուն, Թովմա Աթորունուն, Գեորգ Ալեաացուն, Բուրբու Օրբելյանին, Գրիգոր Օղթայակիր պատրիարքին և շատ ուրիշների նվիրված հոդվածներում, որ հաստիկ ուշադրության արժանի է Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի մատենադարանի ձեռագրերի բերած նպաստը հայ մատենագրությանը: Իսկ այդ ձեռագրերի ամենաարդյունաշատ հետազոտողը Նորայր արքեպիսկոպոս Մովսիսյանն է: Փորրածավալ, լակոնիկ ոճով հյուսված հոդվածների ներկա ժողովածուն մի տեսակ համաբազմամար է բերում նրա տարիների վստահելի բնագրագիտության անպարելելի մակարդակը: Սակայն ուրախալի է, որ ձերբնագարդ հեղինակը այսօր ևս շարունակում է իր օգտակար աշխատանքը ի շահ հայագիտության:

Ա. Գ. ՄԱՊՈՍՅԱՆ